ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"27" հունվարի 2023թ. N 2244-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՋՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՉՎԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N 2778-Ա ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Գեղարքունիքի մարզի միջմարզային և ներմարզային կանոնավոր փոխադրումների երթուղիների չվացուցակները՝ համաձայն հավելված 1-ից մինչև հավելված 8–ը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 3-ի «Գեղարքունիքի մարզի միջմարզային և ներմարզային կանոնավոր փոխադրումների երթուղիների չվացուցակները հաստատելու մասին» N 2778-Ա հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

10/27/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

**ՆԱԽԱՐԱՐ՝** Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

**ք.Երևան**